

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Նկարում Գ տառով նշված է.

- 1) բազալտային շերտը
- 2) գրանիտային շերտը
- 3) միջնապատյանը
- 4) նստվածքային շերտը



2 Որքա՞ն է հարավարևմտյան կողմի ազիմուտը.

- 1) 225°
- 2) 45°
- 3) 270°
- 4) 135°

3 Արշավախումբը հս. լ. 6°, արմ. ե. 66° կոորդինատից շարժվեց հարավ՝ օրական անցնելով 33,3 կմ ճանապարհ: Արշավախմբի գտնվելու վայրի աշխարհագրական կոորդինատները 45 օր անց կլինեն.

- 1) հվ. լ. 6,5°, արմ. ե. 66°
- 2) հս. լ. 4,5°, արմ. ե. 66°
- 3) հվ. լ. 7,5°, արմ. ե. 66°
- 4) հս. լ. 19,5°, արմ. ե. 66°

4 Մարտի 21-ին առավելագույն ջերմություն ստանում են.

- 1) հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնությունները
- 2) հարավային կիսագնդի արևադարձային լայնությունները
- 3) հյուսիսային կիսագնդի արևադարձային լայնությունները
- 4) հասարակածային լայնությունները

5 Մթնոլորտի ազդեցությամբ չեն առաջանում.

- 1) մթնոլորտային տեղումները
- 2) տարվա եղանակները
- 3) քամիները
- 4) ծովային հոսանքները

6 Ո՞ր պնդումն է ճիշտ.

Երկրի ներքին ուժերի հետ են կապված.

- 1) ցունամիի և ցիկլոնի առաջացումը
- 2) երկրաշարժի և տորնադոյի առաջացումը
- 3) երկրաշարժի և ցունամիի առաջացումը
- 4) տորնադոյի և ցիկլոնի առաջացումը

7 Մշտապես միևնույն ուղղությամբ փչող քամիներ են.


- 1) պասսատները և արևմտյան քամիները
- 2) արևմտյան քամիները և մուսսոնները
- 3) մուսսոնները և պասսատները
- 4) բրիզները և պասսատները

8 Գետի անկումը 1764 մ է, երկարությունը՝ 196 կմ: Գետի թեքությունը կլինի.

- 1) 8 մ/կմ
- 2) 0,1 մ/կմ
- 3) 9 մ/կմ
- 4) 12 մ/կմ

9 Նկարում Ե տառով նշված է.


- 1) հարավային բևեռային շրջագիծը
- 2) Հարավային բևեռը
- 3) Հասարակածը
- 4) հարավային արևադարձը



10

«Քամիների վարդում» հորիզոնի n° ր կողմից է ամենից շատ փչել քամին.

- 1) հյուսիսարևմտյան
- 2) հարավարևելյան
- 3) հարավարևմտյան
- 4) հյուսիսարևելյան



11

«Հողատիպ – բնական զոնա» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) անտառային գորշ – լայնատերև անտառ
- 2) սևահող – փշատերև անտառ
- 3) պոդզոլային – սավաննա
- 4) դարչնագույն – տունդրա

12

«Օովածոց – օվկիանոս» գույգերից ընտրել սխալը.

- 1) Օմանի – Հնդկական
- 2) Բոտնիկական – Հյուսիսային սառուցյալ
- 3) Կալիֆոռնիական – Խաղաղ
- 4) Գվինեական – Ատլանտյան

13

Ω° ր կլիմայական գոտին է բաժանվում կլիմայական երեք մարզի՝ արևմտյան (միջերկրածովային), կենտրոնական (ցամաքային), արևելյան (մուսսոնային).

- 1) մերձարևադարձային
- 2) մերձարկտիկական (մերձանտարկտիկական)
- 3) հասարակածային
- 4) մերձհասարակածային

14

Ω° ր պնդումն է ճիշտ.

- 1) Ջերմային բարեխառն գոտիներն ընկած են արևադարձերի միջև:
- 2) Արեգակից ստացվող ջերմության քանակը կախված է վայրի աշխարհագրական լայնությունից և բացարձակ բարձրությունից:
- 3) Բնեռներում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են մեծ անկյան տակ:
- 4) Հասարակածում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են փոքր անկյան տակ:

15

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հյուսիսային կիսագնդում պասսատները փչում են հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք:
- 2) Եվրասիայի մերձարևադարձային և բարեխառն կլիմայական գոտիների արևելյան ծովափնյա շրջաններում ամռանը օվկիանոսից դեպի ցամաք են փչում խոնավ և տաք մուսսոնները:
- 3) Քամու ուժը կախված է արագությունից:
- 4) Ցերեկային բրիզն առաջանում է ցերեկը ջրավազանի վրայի սառն ու ծանր օդի դեպի ցամաք շարժվելու հետևանքով:

16

«Գետ – հորդացման սեզոն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Օրինկո – ամառ
- 2) Յանգզի – գարուն
- 3) Նիգեր – ձմեռ
- 4) Տիգրիս – ձմեռ

17

«Աշխարհամաս – կղզի» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Եվրոպա – Իսլանդիա
- 2) Անտարկտիկա – Թասմանիա
- 3) Ասիա – Կրետե
- 4) Աֆրիկա – Հրո երկիր

18


«Գետ – օվկիանոս» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Մեկոնգ – Հնդկական
- 2) Դոն – Հյուսիսային սառուցյալ
- 3) Կոլորադո – Իսադադ
- 4) Շարի – Հնդկական

19

Քարտեզում Ա տառով n°-ը ծովն է նշված.

- 1) Արևելաչինական
- 2) Ֆիլիպինյան
- 3) Սուլավեսի
- 4) Հարավչինական



20

Քարտեզում Ը տառով n°-ը մայրաքաղաքն է նշված.

- 1) Բիշքեք
- 2) Տաշքենդ
- 3) Աշխաբադ
- 4) Աստանա

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ի տարբերություն հարթավայրային գետերի՝ լեռնային գետերն ունեն փոքր թեքություն:
- 2) Գետի ծախսը հունի լայնակի կտրվածքով մեկ վայրկյանում անցած ջրի քանակն է:
- 3) Մորենային թմբերը գետի քայքայիչ աշխատանքի արդյունքում առաջացած մակերևույթի ձևերն են:
- 4) Հարթավայրերում մակերևույթի բնույթից կախված՝ շատ հստակ է արտահայտվում գետերի ջրբաժան գիծը:

22

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հարավային Ամերիկայի հյուսիսային ափերի մոտով անցնում է Գվինեական տաք հոսանքը:
- 2) Հարավային Ամերիկայի հարավարևելյան ափերի մոտով անցնում է Ֆոլկլենդյան սառը հոսանքը:
- 3) Հարավային Ամերիկայի արևելյան ափերի մոտով անցնում է Բրազիլական տաք հոսանքը:
- 4) Հարավային Ամերիկայի արևմտյան ափերի մոտով անցնում է Պերուական սառը հոսանքը:

23

Յ-րդ ժամային գոտին ընկած է.

- 1) արլ. ե. $7^{\circ} 30'$ -ի և արլ. ե. $22^{\circ} 30'$ -ի միջև
- 2) արլ. ե. $22^{\circ} 30'$ -ի և արլ. ե. $37^{\circ} 30'$ -ի միջև
- 3) արլ. ե. $37^{\circ} 30'$ -ի և արլ. ե. $52^{\circ} 30'$ -ի միջև
- 4) արմ. ե. $22^{\circ} 30'$ -ի և արմ. ե. $37^{\circ} 30'$ -ի միջև

24


Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Այստեղ են առաջացել քրիստոնեություն և բուդդայականություն կրոնները:
- 2) Երկրների մեծ մասի բնակչության կազմում գերակշռում են կանայք:
- 3) Բարձր է բնակչության բնական աճը:
- 4) Տարածաշրջանի մեջ են մտնում Արաբական և Հինդուստան թերակղզիները:

25

Մեռատարիքային բուրգը բնորոշ է.

- 1) Թուրքիային
- 2) Ավստրալիային
- 3) Ռուսաստանին
- 4) Մեծ Բրիտանիային



26

Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներում բարձր բնական աճը պայմանավորված չէ.

- 1) գյուղական բնակչության գերակշռությամբ
- 2) կրթական բարձր մակարդակով
- 3) կանանց տնտեսության մեջ ներգրավվածության ցածր աստիճանով
- 4) վաղ ամուսնություններով

27

Հասարակության զարգացման մեջ քաղաքների դերի մեծացման պատմական գործընթացը, որն արտահայտվում է բնակչության ընդհանուր թվում քաղաքային բնակչության տեսակարար կշռի ավելացմամբ և քաղաքային ապրելակերպի տարածմամբ, կոչվում է.

- 1) միգրացիա
- 2) ագլոմերացիա
- 3) դեպոպուլյացիա
- 4) ուրբանիզացիա

28

Բնութագրումով որոշել պետությունը.

Հարավարևմտյան Ասիա տարածաշրջանի այս երկրի տնտեսության մասնագիտացման ճյուղերից է նավթի արդյունահանումը և փյունիկյան արմավի մշակումը: Երկիրն արևմուտքից սահմանակցում է Մաուրիտանիային, իսկ արևելքից՝ Իրանին: Ո՞րն է այդ երկիրը.

- 1) Սիրիան
- 2) Լիբանանը
- 3) Օմանը
- 4) Իրաքը

29

Որքա՞ն կկազմի երկրի բնակչության բացարձակ բնական աճը, եթե բնակչության թիվը 2780000 է, ծնելիությունը կազմում է 12 ‰, մահացությունը՝ 7 ‰.

- 1) 52820
- 2) 19460
- 3) 13900
- 4) 33360

30 **Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Թեհրանը, Սպահանը երկրի հայաշատ քաղաքներից են:
- 2) Ունի բնակչության բարձր բնական աճ:
- 3) Ըստ պետական կարգի՝ բացարձակ միապետություն է:
- 4) Պարսիկներից հետո երկրի խոշոր ազգություններից են ադրբեջանցիներն ու քրդերը:

31 **Դաշնային պետական կառուցվածք ունեն.**

- 1) Ֆրանսիան, ԱՄՆ-ը
- 2) Հնդկաստանը, Իրանը
- 3) Ռուսաստանը, Թուրքիան
- 4) Կանադան, Գերմանիան

32 **«Արտադրանք – արդյունաբերության ճյուղ» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) պլաստմասսա – մեքենաշինություն
- 2) տրիկոտաժ – թեթև արդյունաբերություն
- 3) սինթետիկ մանրաթել – թեթև արդյունաբերություն
- 4) հաստոց – մետաղաձուլություն

33 **«Ժողովրդագրական պայթյունը» բնորոշ է.**

- 1) Ռուսաստանին և Ուկրաինային
- 2) Ֆրանսիային և Գերմանիային
- 3) ԱՄՆ-ին և Կանադային
- 4) Նիգերիային և Ռուանդային

34 **«Նավահանգիստ – երկիր» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Մումբայ – Հնդկաստան
- 2) Օդեսա – Ռուսաստան
- 3) Փոթի – Ադրբեջան
- 4) Մարսել – Իսպանիա

35

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Շաքարեղեգը ջերմասեր բույս է և հիմնականում տարածված է ջերմային տաք գոտում:
- 2) Միջերկրածովյան երկրները մասնագիտանում են ձիթապտղի մշակությամբ:
- 3) Վուշը հիմնական թելատու մշակաբույսն է և տարածված է արևադարձային գոտու երկրներում:
- 4) Շաքարի ճակնդեղի մշակության հիմնական շրջանները բարեխառն գոտում են:

36

Չինաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հարուստ է արժեքավոր անտառներով:
- 2) Արևելյան շրջաններում գետերը քիչ են և սակավաջուր:
- 3) Առաջատար է բամբակյա և մետաքայա գործվածքների արտադրությամբ:
- 4) Կենտրոնական և արևմտյան մասերի կլիման խոնավ մերձարևադարձային-մուսսոնային է:

37

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Թեթև արդյունաբերությունն աչքի է ընկնում աշխատատարությամբ:
- 2) Թեթև արդյունաբերությունը բացասական մեծ ներգործություն ունի շրջակա միջավայրի վրա:
- 3) Համաշխարհային թեթև արդյունաբերության մեջ բավականին մեծ է զարգացող երկրների մասնաբաժինը:
- 4) Թեթև արդյունաբերությունը սերտորեն կապված է գյուղատնտեսության հետ:

38

«Մշակաբույս – առաջատար երկիր» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) բամբակենի – Կանադա
- 2) կակաո – Գանա
- 3) թեյ – Նորվեգիա
- 4) սուրճ – Ֆրանսիա

39

«Սահմանակից երկրներ – լեռներ» գույգորդումներից ընտրել ճիշտը.

- 1) Հնդկաստան – Չինաստան – Տյան Շան
- 2) Չիլի – Արգենտինա – Անդեր
- 3) Լեհաստան – Սլովակիա – Պիրենեյներ
- 4) Իտալիա – Ֆրանսիա – Կարպատներ

40

Ո՞ր երկու երկրները Հարավարևմտյան Ասիայում չեն.

- 1) Պակիստանը և Թուրքմենստանը
- 2) Սիրիան և Լիբանանը
- 3) Իսրայելը և Հորդանանը
- 4) Թուրքիան և Իրանը

41

Բնութագրումով որոշել երկիրը.

*Բնակչության թվաքանակով երկիրն աշխարհում առաջին տասնյակում է:
Բազմազգ պետություն է: Բնակչությանը բնորոշ է նեղացված վերարտադրության
ռեժիմը: Բնակչության խտությունն արևմուտքից արևելք շարժվելիս նվազում է:
Ո՞րն է այդ երկիրը.*

- 1) Ռուսաստանը
- 2) Ղազախստանը
- 3) Ուկրաինան
- 4) Պակիստանը

42

Թուրքիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչության գերակշիռ մասը դավանում է մահմեդականության սուննի ուղղությունը:
- 2) Թուրքերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական լեզվախմբին:
- 3) Բնակչությունը բնութագրվում է բարձր բնական աճով:
- 4) Բնակչության թվով երկրորդ ազգը քրդերն են:

43

Ո՞ր շարքում տրված լեռնագագաթներն ունեն հրաբխային ծագում.

- 1) Սիփան, Ծղուկ, Սրմանց
- 2) Գոմշասար, Թեժլեռ, Սուկավետ
- 3) Աոնոս, Ուրծ, Մեծ Քիրս
- 4) Մարութա, Ջիլո, Կապուտջուղ

44

«Լեռնագագաթ – բարձրություն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Աժդահակ – 3597 մ
- 2) Արագած – 4900 մ
- 3) Թեժ լեռ – 3895 մ
- 4) Կապուտջուղ – 3550 մ

45

Ընտրել միջլեռնային գոգավորությունների անվանումների և դրանց բնութագրերի համապատասխանությունների ճիշտ շարքը.

- | | |
|------------------|--|
| ա. Բասենի դաշտ | 1. Այդտեղ են միախառնվում Արևմտյան և Արևելյան Եփրատ գետերը: |
| բ. Երզնկայի դաշտ | 2. Տարածվում է Արևմտյան Եփրատի ակունքներում՝ 1800–2000 մ բարձրության վրա, հատակը հարթ է, տեղ–տեղ՝ ճահճոտ: |
| գ. Կարնո դաշտ | 3. Տարածվում է Արաքսի վերին հոսանքի ավազանում և ծածկված է բերրի սևահողերով: |
| դ. Խարբերդի դաշտ | 4. Տարածվում է Արևմտյան Եփրատի միջին հոսանքի ավազանում՝ 1200–1400 մ բարձրության վրա և ունի բարձր սեյսմիկություն: |

- 1) ա–3, բ–4, գ–1, դ–2
- 2) ա–1, բ–4, գ–2, դ–3
- 3) ա–3, բ–4, գ–2, դ–1
- 4) ա–1, բ–3, գ–2, դ–4

46

ՀՀ-ի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Անասնապահության ճյուղային կառուցվածքը ձևավորվել է միայն բնակչության պահանջմունքների և տնտեսական պայմանների ազդեցությամբ:
- 2) Գոյություն ունի արոտավայրերի գերբեռնվածություն և գերարածեցում:
- 3) Տավարաբուծությունը մյուս ճյուղերի համեմատ ավելի համաչափ է տեղաբաշխված:
- 4) Բնորոշ է արոտային անասնապահության զարգացման վերընթաց գոտիական համակարգը:

47

ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:
- 2) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
- 3) Ալյումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
- 4) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:

48

Հրազդան և Արարատ քաղաքների օդային ավազանի աղտոտման պատճառներից է.

- 1) շինանյութերի արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումները
- 2) քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների արտանետումները
- 3) գունավոր մետաղաձուլական ձեռնարկությունների արտանետումները
- 4) մեքենաշինական ձեռնարկությունների առկայությունը

49


Լոռու մարզի ո՞ր քաղաքը երկաթուղային կայարան չէ.

- 1) Ստեփանավան
- 2) Ալավերդի
- 3) Թումանյան
- 4) Սպիտակ

50

Ի՞նչն ընդհանուր չէ Տավուշի և Վայոց ձորի մարզերի համար.

- 1) Բնակչության մեծ մասն ապրում է գյուղերում:
- 2) Մասնագիտացած են հանքային ջրերի արտադրության մեջ:
- 3) Հարուստ են անտառային ռեսուրսներով:
- 4) Գերիշխում են ծալքաբեկորավոր լեռնաշղթաներն ու միջլեռնային գոգավորությունները:



51 Ո՞ր գետն է քարտեզում նշված Դ տառով.

- 1) Մասրիկ
- 2) Գավառագետ
- 3) Գետիկ
- 4) Արգիճի

52 Ո՞ր էլեկտրակայանն է քարտեզում նշված Զ տառով.

- 1) Քանաքեռի
- 2) Երևանի
- 3) Արզնու
- 4) Արգելի

53 Նավթի պաշարներով հարուստ պետությունն է.

- 1) Գերմանիան
- 2) Նորվեգիան
- 3) Իսլանդիան
- 4) Շվեդիան

54 Թթվային անձրևների առաջացման պատճառ է(են).

- 1) մթնոլորտում ածխաթթու գազի առկայությունը
- 2) Հյուսիսային Ամերիկայում պեստիցիդների չարաշահումը
- 3) միջերկրածովյան շրջաններում զբոսաշրջության զարգացումը
- 4) մետաղաձուլական ձեռնարկություններից ծծմբային միացությունների արտանետումները

55 Բնական միջավայրի այնպիսի փոփոխությունը, որը հանգեցնում է երկրահամակարգի էկոլոգիական հավասարակշռության խախտմանը և կենդանի օրգանիզմների, այդ թվում՝ մարդկանց գոյության պայմանների վատթարացմանը, կոչվում է.

- 1) աղտոտում
- 2) ջերմոցային էֆեկտ
- 3) բնօգտագործում
- 4) սահմանային թույլատրելի խտություն

56 **Գրել այն լճերի համարները, որոնք Ասիայում են.**

- | | |
|-----------|--------------|
| 1. Թանա | 5. Օնեգա |
| 2. Ուրմիա | 6. Սևանա |
| 3. Մեռյալ | 7. Աթաբասկա |
| 4. Պոռպո | 8. Իսիկ Կուլ |

57 **Գրել այն լեզվախմբերի համարները, որոնք չեն մտնում հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ.**

- | | |
|---------------|----------------|
| 1. գերմանական | 5. քարթվելական |
| 2. թյուրքական | 6. հնդարիական |
| 3. հայկական | 7. ռոմանական |
| 4. սլավոնական | 8. իրանական |

58 **Գրել միագործառութային քաղաքների համարները.**

- | | |
|--------------|-------------|
| 1. Նոր Հաճըն | 5. Ծաղկաձոր |
| 2. Մեծամոր | 6. Քաջարան |
| 3. Արմավիր | 7. Հրազդան |
| 4. Իջևան | 8. Կապան |

59 **Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Խաղաղ օվկիանոսի ծովային հոսանքների համարները.**

- | | |
|----------------------------|----------------------|
| 1. Կուրո Սիո | 5. Արևելաավստրալական |
| 2. Ասեդի հրվանդանի | 6. Ալյասկայի |
| 3. Հյուսիսխաղաղօվկիանոսյան | 7. Գվինեական |
| 4. Գվինական | 8. Գոլֆստրիմ |

60 **Գրել Անտարկտիդայի ափերը ողողող ծովերի համարները.**

- | | |
|-------------------|---------------|
| 1. Բելինսհաուզենի | 5. Ռոսսի |
| 2. Բարենցի | 6. Ուեդդելի |
| 3. Թասմանի | 7. Ամունդսենի |
| 4. Չուկոտյան | 8. Լապտևների |

61 Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել տեկտոնահրաբխային և խառնարանային ծագում ունեցող լճերի համարները.

- | | |
|------------|-------------|
| 1. Օնեգա | 5. Ռուդոլֆ |
| 2. Սևանա | 6. Նեմրութի |
| 3. Օնտարիո | 7. Արմադանի |
| 4. Վանա | 8. Բայկալ |

62 Հարավային Եվրոպայի տրված պետությունները դասավորել սահմանակից երկրների թվաքանակի աճման կարգով.

1. Իտալիա
2. Պորտուգալիա
3. Անդորրա
4. Իսպանիա

63 ՀՀ տրված գետերի համարները դասավորել ըստ այն քաղաքների, որոնցով հոսում են այդ գետերը. Ապարան, Վայք, Վանաձոր.

1. Արփա
2. Փամբակ
3. Քասաղ

64 Նավթի համաշխարհային հետախուզված պաշարները կազմում են 133 մլրդ տ: Երկրագնդի բնակչության թիվը 7 մլրդ մարդ է: Որքա՞ն է երկրագնդի բնակչության մեկ շնչի հաշվով ռեսուրսապահովվածությունը նավթով:

(65-66) Գետի լայնությունը 8 մ է, միջին խորությունը՝ 50 սմ, ջրի արագությունը՝ 1,5 մ/վ.

65 Որոշել գետի ծախսը:

66 Որոշել գետի հոսքը 1 ժամում:

(67-68) ՀՀ բնակչությունը 3,2 մլն է, մահացության ցուցանիշը՝ 0,6 %, բնական աճը՝ 0,3 %.

67 Որոշել ՀՀ բնակչության տարեկան բացարձակ բնական աճը:

68 Որոշել ՀՀ բնակչության տարեկան բացարձակ մահացությունը:

69

Աշխարհի տրանսպորտի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

1. Համաշխարհային ուղևորափոխադրումների ոլորտում բացարձակ առաջատարը ավտոմոբիլային, իսկ բեռնաշրջանառության ոլորտում՝ ծովային տրանսպորտն է:
2. Առևտրային նավատորմով աշխարհի առաջատար երկրներն են Լիբերիան, Պանաման, Ճապոնիան և Հունաստանը:
3. Ծովային փոխադրումների հիմնական բեռներն են նավթն ու նավթամթերքը, հանքաքարի տարբեր տեսակները, հացահատիկը և անտառանյութը:
4. Բեռնաշրջանառությունը որոշակի ժամանակահատվածում տեղափոխած բեռների քանակի և փոխադրումների միջին հեռավորության հարաբերությունն է:
5. Տրանսպորտի մի քանի տեսակների հաղորդակցության ուղիների ճյուղավորման վայրը կոչվում է տրանսպորտային համակարգ:
6. Տրանսպորտային ցանցի կոնֆիգուրացիան կախված է տարածքի մեծությունից և ուրվագծից, բնական պայմաններից, տնտեսության և բնակչության տեղաբաշխման բնույթից:

70

ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

1. Հողաբարելավման գլխավոր տեսակը քիմիական մելիորացումն է:
2. Կարտոֆիլ աճեցվում է բոլոր բնական գոտիների ցանքատարածություններում:
3. Բուսաբուծության մասնագիտացման ճյուղերն են խաղողագործությունը և պտղաբուծությունը:
4. Անասնապահության արտադրանքի բաժինը զգալիորեն գերակշռում է բուսաբուծության նկատմամբ:
5. Հացահատիկի և կարտոֆիլի մշակությունն ունի տեղական նշանակություն:
6. Գյուղատնտեսական նշանակության հողերից ամենամեծ մակերեսը զբաղեցնում են վարելահողերը: